

17877

371

e-34

1930

Շ-3426

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԿԻՑ  
ՀԵՌԱԿԱ ՌԻՍՄԱՆ ԲՅՈՒՐՈ

*Չեռագրի իրավունքով*

ՊԱՏՄԱՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՈՒՐՍ II

1930 Թ.

ԱՌԱՋԱԴՐՈՒԹ. № 1

ԱՐՇ. ՇԱՎԱՐՇՅԱՆ

# Ը Ն Դ Ն Ա Ն Ո Ւ Ր Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

371
Շ-34

22001

2010

1930 Թ.



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մանկավարժության առարկան և մեթոդները :

Հասանգակմանը, խնամքի և միջավայրի պայմանները մանկավարժության մեջ :

Անհատական մանկավարժություն : Ազատ դաստ. տեսություն :

Սոցիալական մանկավարժություն :

Եփագրիմենտայ մանկավարժություն :

Մանկավարժական պրոցեսի մանկաբանական— հոգեբանական նախադրյալները :

Ֆիզիկական կրթություն :

Մտավոր կրթություն : Մանկավարժական հագեթանության խնդիրներ :

### ՀԻՄՆ. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Пинкевич.—Педагогика т. I и II 1929-1930 г.
2. Блонский.—Педагогика.
3. Выготский.—Педагогич. психология 1926

### ՌԺԱՆԻԱԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Гергет и Готалов - Готлиб.—Совр, педагогическое течения 1925.
2. Марксистская пед. хрестоматия (под ред. Пинкевича) ч. I 1926 г.
3. Педагогич. энциклопедия т. I. 1927 г.
4. Շալգիբ.—Սոցիալական դաստիարակության հիմնական խնդիրները.
5. «Проблемы научной педагогики» сб. I, II, III. 1928—29 г.
6. Вопросы советск. педагогики, сб. I. 1929 г.
7. С. Фридман.—Вопросы марксистск. педагогики 1929 г.
8. С. Фридман.—За марксистскую педагогику. 1930 г.
9. Крупенина и Шульгин.—В борьбе за марксистскую педагогику. 1929 г.
10. Калашников.—Очерки марксистской педагогики. 1929 г.
11. Комаровский.—Диалектика развития научно — педагогической мысли. 1929 г.
12. Ссруминский.—В поисках марксистской методологии в педагогике. 1930 г.



6 815-53

21323

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### I ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

- ա) Դաստիարակության ու կրթության սահմանումն ըստ Պատրիստի, Բրոնսկու և Պինկեիչի.
- բ) Կողմակերպված և անկողմակերպ ներդրություն պրոցեսի մանկավարժության մեջ.
- գ) Շուրջին բանավեճը Պինկեիչի հետ.
- դ) Մանկավարժական պրոցեսի ելույթները.

### II ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ ԻՐԵՎ ԳՐՏՈՒԹՅՈՒՆ

- ա) Մանկավարժության կասն այլ գիտությունների հետ.
- բ) Մանկավարժությունը իրրե դաստիարակության և կրթության գիտություն.
- գ) Մանկավարժական գիտություններ.

### III ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ - ԳՐՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- ա) Գիտությունների մեթոդ.
- բ) Երազերիմենտայ մեթոդ.
- գ) Անկետային մեթոդ.
- դ) Տեսուրի մեթոդ.
- ե) Այլ մեթոդներ.

### I ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Ամեն մի գիտություն բնորոշվում և յուր բովանդակությամբ : Մանկավարժությունն այն գիտությունն է, վորի բովանդակությունը դաստիարակության և կրթության խնդիրներն են : Ի՞նչ է դաստիարակությունը և կրթությունը : Ամուրյա գրուչցի մեջ «դաստիարակություն» և «կրթություն» գործածվում են իրրե համանիշ գաղափարներ, սակայն մանկավարժության մեջ տարբեր ձևով և մեկնաբանվում այդ գաղափարների խմաստը :

Գերմանացի փրկիստիա-մանկավարժ Ֆր. Պաուլսենն այսպես և  
ընտրելով դաստիարակութեան էությունը. «Դաստիարակու-  
թյունը—դա իդեալական-կուլտուրական ստացվածքի փոխանցումն  
և ծնողներից յերեխաներին»: Յուրաքանչյուր սերունդին ծնողնե-  
րից փոխանցվում են վոչ միայն կուլտուրայի նյութական արտա-  
դրանքներն, այլ և հոգեվոր բարեքները—լեզու, կրոն, սովորույթ-  
ներ, արվեստ, պիտույթյուն և այլն:

Պորճրդային մանկավարժներից Բյոնսկին միանգամայն ան-  
ճիշտ և համարում Պաուլսենի ըմբռնումը դաստիարակութեան մա-  
սին: Բյոնսկու կարծիքով ա) դաստիարակութեան պրոցեսը կա-  
տարվում է վոչ միայն ծնողների և իրենց յերեխաների, այլև  
մեծերի միջև, բ) դաստիարակությունը միշտ էլ չի ձգտել սանին  
տալ իդեալական-կուլտուրական ստացվածքը, ապացույց հենց  
ժողովրդական դպրոցի պատմությունը, վորը հակառակ պնդելու  
չառ փաստեր և պարունակում: «Դաստիարակությունը կան-  
խամտածված, կազմակերպված տեական ներդրություն է ավյալ  
որդանիքի դարգացման վրա»—սահմանում է նա: Այստեղ «որ-  
դանիք» բառը ցույց է տալիս, վոր դաստիարակչական պրոցեսը  
վերաբերում է ե' մարդուն և' կենդանուն և' բույսերին:

Դաստիարակութեան և կրթութեան գաղափարներն ամենից  
ավելի վորոշակի ձևակերպում է Պինկեիչը: «Դաստիարակությու-  
նը մի մարդու (կամ վոմանց) պլանաչափ, տեական ներդրու-  
թյունն է մյուսի (կամ մյուսների) վրա, զարգացնելու վերջինիս  
(կամ վերջիններիս) բնածին, բիոլոգիայես կամ սոցիալապես  
երթևեկվոր հատկությունները»: Ամեն մի ներդրություն դեռևս  
դաստիարակչական պրոցեսն է, դա պետք է լինի նախապես ծրա-  
դրված, սխտեմատիկ և վոչ պատահական ու տարերային, պետք  
է լինի տեական և վոչ եպիդոտիկ, թոուցիկ, ինչպես, որինակ, մի  
ղրույցի կամ դաստիարակչական սոցիոլոգիայես, վորբան էլ դա  
դրական լինի: Այս բացատրությունից հետևում է, վոր դաստիա-  
րակչական գործի առթիվ անպայմանորեն պետք է դրված լինի վո-  
րոշ նպատակ: Պինկեիչն այդ նպատակը համարում է  
մարդու այն բնածին հատկանիշների զարգացումը, վորոնք  
անհատի համար արժեքավոր են բիոլոգիապես և սոցիալական  
տեսակետից ունեն դրական նշանակություն:

Իսկ ի՞նչ է կրթությունը: «Կրթությունը մի մարդու (կամ  
վոմանց) պլանաչափ և տեական ներդրությունն է մյուսի (կամ  
մյուսների) վրա՝ կրթվողի մեջ ստեղծելու ամբողջական ու վորոշ  
աշխարհայացք և գիներու նրան այն գիտելիքներով ու կարողու-  
թյուններով, վորոնք անհրաժեշտ են լինելու ապագա մասնագի-  
տություն ընտրելիս»: Այս ձևակերպումից յեղրակացում ենք

վոր ներդրություն յենթարկվում են վոչ միայն բնածին հատկա-  
նիշները, այլև ըմբռնումները, մասնորոշությունը՝ հասկանալու  
ընթացքն և մարդկային աշխարհները, մի խոսքով՝ չբնապատը,  
կազմելու ինքնուրույն և ամբողջական աշխարհայացք և բո-  
սայնմ փոխելու այդ չբնապատը:

Պինկեիչը դաստիարակչական և կրթական անմիջական ներ-  
դրությունը չի վերադրում բացառապես ուսուցչին, այլ դաս-  
տիարակի կազմակերպած միջավայրին, «դաստիարակ» գաղա-  
փարի տակ հասկանալով ինչպես անհատ անձնավորություննե-  
րին, այնպես և հիմնարկներին, կազմակերպություններին, պե-  
տության: Դաստիարակչական և կրթական ներդրություն  
յենթակա յեն ինչպես յերեխաները, պատանիները, այնպես և  
հասակախոսները, մանավանդ կրթության սուպարիցում: Աշխար-  
հայացքի մշակումը և ամբողջացումը դանդաղ է կատարվում, դա  
չարունակվում է մինչև վ անհատի լրիվ հասունացումը, և վորով-  
հետև աշխարհայացքի մշակման նախապայմանը չբնապատի  
ճիշտ ու լայն ծանոթությունն է, ուրիշ խոսքով՝ կրթությունը,  
ուստի և այդ պրոցեսը շարունակվում է համարյա մինչև կյան-  
քի վերջը:

Չնայած «դաստիարակութեան» և «կրթութեան» գաղափար-  
ների տարբերության, այնուամենայնիվ դրանք այնքան սերտորեն  
չաղկապված են միմյանց, վոր դժվար է մատնանշել յերկուսի  
սահմանները, և այնպիսի մանկավարժական ներդրություն-  
ներ, վորտեղ չլինեն մեկի կամ մյուսի տարրերը: Այստեղից հե-  
տևում է, վոր դաստիարակությունը և կրթությունը մանկա-  
վարժական պրոցեսի յերկու կողմերն են, գործնականում հյուս-  
ված, միացած իրար:

Մանկավարժ Ծուլգինը հարձակվում է Պինկեիչի վրա դաս-  
տիարակութեան և կրթութեան իդեաների ձևակերպման առթիվ,  
համարելով այդ ձևակերպումը հին, մաշված և փոխառնված  
բուրժուական մանկավարժությունից: Առաջներում բուրժուա-  
կան աշխարհում յերեխային սովորեցնելիս պահանջվում էր, վոր  
ուսուցիչը տեական և պլանաչափ ներդրություն սեռենա նրա  
վրա: Մակայն, խորճրդային մանկավարժությունը չի կարող չա-  
փանիչ ընդունել այդպիսի ներդրություն: Համաձայն էլենինի  
այն խոսքի, վոր մասսաները սովորում են գործնականում իրենց  
փորձով, «մենք պետք է ոգնենք յերեխային պլանաչափ, ճշտ-  
րեն և արագ զարգանալու, աճելու յուր աշխատանքի, փորձի  
չբնանում», ստում է Ծուլգինը: Մարդիկ սովորում են սյուլքարի և  
չինարարություն պրոցեսում, պրակտիկան մղում է դեպի գիտե-  
լիքներ, դեպի գիտություն և գործնականով սուուզվում տեսա-

կանը — այս ճշմարտութիւնը հաստատարակուեալ վերաբերում է և փոքրերին և հասակաւորներին :

Բացարձակ մոլորութիւնն և յենթագրել, վոր միայն դպրոցն և դաստիարակում : Գոյութիւնն ունի «տարերային» դաստիարակչական պրոցեսը, վորի դերը հսկայական է թէ՛ փոքրերի և թէ՛ հասակաւորների համար : Բութութեան շահագրգռում չէ կազմակերպելու այդ տարերային դաստիարակութիւնը — աշխատավոր մասսաների ինտերաները նկատի առնելով : Բարձրագիտական կենտրոն, թատրոնի, մամուլի, յեկեղեցու միջոցով և բողմաթիվ ուրիշ հիմնարկութիւնների միջոցով ձգտում է տարերային դաստիարակութիւնը տալ կազմակերպութեամբ միայն միջազնելու մասսաների դասակարգային գիտակցութիւնը :

Երբ՝ իրաւունք մանկավարժութեան մեջ պետք է մեծ ուշադրութեամբ դարձնել նաև դաստիարակութեան տարերային պրոցեսի վրա, վորը հետզհետեւ դառնում է կազմակերպութեամբ : Կոմկուպրասանակներ շարունակ կանտարել և դաստիարակչական հսկայական աշխատանքներ : Նա բանվոր դասակարգին կրթել-սովորեցրել է քաղաքական ամենուրեք պայքարում, դաբրել հեղափոխական վողին, կազմակերպել նրա աշխարհայացքը մարքսիզմի սկզբունքներով և լցրել անհաշտ ատելութեամբ դեպի շահագործումն ու շահագործողները :

Կրթում-դաստիարակում է պէտեակա իշխանութիւնը յուր բարդ ապարատով, յուր կոմիտարիատներով և ախելի ստորադաս հիմնարկներով ու մարմիններով : Մասսաների դաստիարակման գործնական դպրոցներ են հանդիսանում պրոֆմիտիւթիւնները, վորոնց լինին անվանում է «համախմբման, փոխադարձ շահերի գիտակցման, միմյանց շահերի պաշտպանութեան, անտեսութեան դպրոց», արտադրական խորհրդակցութիւնները, գործարանները, դափազները, վորոնք կուսակուսութեան բանվորութեան գիտակցութեանը : Սովորեցնում են կոպերայիան, խորհուրդները, պրենումները, սեկցիաները, ընկերութիւնները : Ինչ խոսք, կրթա-դաստիարակչական գործի ամենադուրաք միջոցներ են՝ մամուլը, գրականութիւնը, գեղարվեստը՝ թատրոն, կինոն, սպորտը, գրադարան-ընթերցարանը, ակումբը և այլն :

Այսպէս ընդլայնելով կրթա-դաստիարակչական ներգործութիւնների սահմանները, Շուլցինը թերադնահատում է դպրոցի դերը : Հենց թեկուզ դպրոցում՝ յերկամները դաստիարակում են իրենց գործնական այն աշխատանքների ընթացքում, վորոնք վերաբերում են մեր յերկրի շինարարութեանը, ժողովրդական անտեսութեան սոցիալիստական վերակառուցման :

Շուլցինի համարձակ և աշխատակից Կրուպենինան խոսելով

մանկավարժութեան առաքիլայի և մեթոդաբանայի մասին, նշում է հետևյալ յերեք սկզբունքները .

ա) Մանկավարժութեան մասին պետք է խոսել վոր ընդհանրապես, այլ ամբողջ եւրոպայի, հասարակակարգի — կապիտալիստական հասարակութեան, անցողիկ շրջանի, կոմունիստական հասարակութեան մանկավարժութեան մասին և այլն :

բ) Այսպէս կոչված «կազմակերպութեամբ մանկավարժական պրոցեսը» կապված է «անկազմակերպ», «տարերային» մանկավարժական հետ : Ընտանիքը, վորոցը, արտադրութեանը, վորոնք բոլոր կարգիներով անկազմակերպ մանկավարժական պրոցեսներ են ստաջանում, անընդհատ ներգործում են դպրոցի և՛ բովանդակութեան և՛ մեթոդների վրա : Դիտելիտիկական մեթոդի հիմնական սկզբունքներին կհակասի «կազմակերպութեամբ» և անկազմակերպ» գործողների արհեստական անջատումը միմյանցից :

գ) Մարդը յուր շրջապատող միջավայրը (ընտանիք և սոցիալական) ձեռնախոյզով, միայն փոխում է յուր սեփական ընտելումը : Մարքսիստական այս թեզից հետևում է, վոր բոլորովին սխալ է Պինկեիշի այն ձեռնարկումը, թէ դաստիարակութիւնը «մի մարդու կամ վոմանց ներգործութեանն և մյուսների վրա» :

Պատասխանելով նույն մտքերն ու սկզբունքները, ինչ Շուլցինը, Կրուպենինան մանկավարժութեան առարկան ձեւակերպում է այսպէս . «Մանկավարժութեան ուսումնասիրութեան առարկան պետք է լինի մարդու սոցիալական ձեւափոխման ամբողջ պրոցեսի հետազոտութիւնը ամբողջ կոնկրետ պատմական եւրոպայում, ուսումնասիրութիւնը ամբողջ դասակարգային միջավայրի պայմանների հետ կապված կազմակերպութիւնների, մեթոդների և ձևերի, հետադասութիւնն այն բոլոր գործողների և որինստիպում է ձեւափոխմանը, վորոնց յենթակա յե նա» : Մանկավարժութեան — քաղաքականութեան — եկոնոմիկա, սրանք անքակտելիորեն կապված են միմյանց հետ : Մանկավարժութեանը չի կարող հրամարվել սոցիալական միջավայրի, քաղաքականութեան և եկոնոմիկայի ուսումնասիրութիւնից, սակայն, մանկավարժը դրանց ուսումնասիրում է յուր տեսակետից — ինչպէս հասարակական հարաբերութիւնները և արտադրութեան այս կամ այն կազմակերպութիւնն ազդում է և փոխում մարդուն, ինչպէս վերջինս փոխվում է սոցիալական հարաբերութիւնների և բնութեան վրա ներգործելիս :

Կարաչնիկովի կարծիքով դաստիարակչական պրոցեսը սոցիալիստական տեսակետից անհատի մղումն է դեպի հասարակական պարտականութիւնների կատարումը, վորով, ուրեմն, դաստիար

բարեօթյունը համարում է նա սոցիալական հարկարում: Բիւր-  
դիական խնամուով հարմարումը հայտնի չէ գարլիկիցմից: Սոցիա-  
լական հարմարումը վերաբերում է մարդուն յուր ստեղծած հա-  
սարակական միջավայրում: Պատմութեան ընթացքում հասարա-  
կական միջավայրը միշտ էլ փոխվել է, հետևապէս փոխվել է  
գաստիարակութեան նպատակներն ու ձևերը: Սոցիալական ձե-  
ւափոխման պրոցեսը տեղի չի ունենում յերեք ուժերով. ա) բնո-  
ւորական գարգացմամբ, բ) հասարակական կենցաղով, գ) հա-  
տուկ գաստիարակութեամբ:

Պինկեիչն առարկելով Շուլցիին, սերեմն կրուպենինային,  
սնդում է.

ա) Վոչ փոք չի կարող ժխտել, փոր մարդը յենթակա չէ հա-  
ղար ու մի արտաքին ներգործութեաններին, այստեղ հարցն այն  
է, թե ի՞նչը պետք է համարել մանկավարժական ներգործու-  
թյուն, փորովհետև ամեն մի ներգործութեան մանկավարժական  
համարել չի կարելի: -

բ) Մանկավարժութեանը նման է գյուղատնտեսութեան: Վեր-  
ջինիս խնդիրն է սպիտակ կենդանիների և բուսաների վրա աջակց  
փորպեսզի յավազույն հետևանքներին հասնի, ի հարկէ, յենելով  
մարդու շահերից: Բոլորովին սխալ կլինէր ասել, փոր բուսաների  
և կենդանիների վրա յեղած բոլոր ազդեցութեաններն արժեքա-  
փոր են գյուղատնտեսական տեսակետից: Եստ հաճախ այդ ազդե-  
ցութեանները կատարվում են անկախ գյուղատնտեսի միջամտու-  
թյունից կամ ցանկութեանից, բայց նա ի հարկէ, պարտավոր է  
հաշի առնել և ուսումնասիրել բնութեան ուժերը: ձիշտ այս ու-  
նարգիտյով պետք է մոտենալ մանկավարժական կազմակերպման  
և անկազմակերպ ներգործութեաններին:

Միջավայրի ազդեցութեանները մանկավարժական արժեք են  
ստանում միայն այն ժամանակ, յերբ դրանք աչլիս տարերային  
չեն և յենթարկվում են մարդու բնական կամբին: «Վորտեղ բոսս  
է, այնտեղ չկա մանկավարժութեան: Վորտեղ չկա կազմակերպ-  
վածութեան, պլանաչափութեան, այնտեղ չի կարելի խոսել ման-  
կավարժական ներգործութեան և մանկավարժական պրոցեսի  
մասին»:

Վերեւում շոշափում Պինկեիչի և Շուլցիինի տեսակետները  
կարելի չէ հաշտեցնել, փորովհետև դրանք իրոք չեն հակադրվում,  
այլ ավելի շուտ լրացնում են իրար: Շուլցիինը, կրուպենինան և  
սրանց կողմնակիցները մանկավարժական պրոցեսը շատ ավելի

չախ շրջանակներում են պատկերացնում, քան Պինկեիչը: Մա-  
կայն, մեր կարծիքով իրավացի չէ վերջինս, յերբ գաստիարակ-  
չական ներգործութեան համարում է կանխամտածվածը և կազ-  
մակերպվածը, փորի համաձայն կարաչնիկովը բնորոշում է «ման-  
կավարժութեան իրրի կազմակերպման մանկավարժական պրո-  
ցեսի գիտութեան»: Այդ «կազմակերպման մանկավարժական  
պրոցեսի» վայրը ներկայումս գլխավորապէս դպրոցն է: Յեթի  
նկատի առնենք դպրոցական տարիքի միանգամայն բարեհաջող  
ներքին տվյալներն ու պայմանները գաստիարակութեան և կրթ-  
ութեան համար, հասկանալի պետք է դատնա, թե ինչու Պին-  
կեիչն անուղղակի կերպով շեշտը դնում է դպրոցի վրա, փորտեղ  
մանկավարժական պրոցեսն ավելի, քան փորեէ աչլ հիմնարկում,  
կազմակերպման և հանդես գալիս:

Վորտեան էլ Շուլցիինի գիտողութեանները մանկավարժական  
պրոցեսի մասին թվում են ճիշտ, բայց և այնպէս այստ անհնա-  
բին և այդ տարերային բազմադան ներգործութեաններն ընդգրկել  
և մանկավարժական հաշիաման յենթարկել, սերեմն և կազմա-  
կերպել, ուստի և մանկավարժական աչլատանքի գլխավոր յնա-  
գավառը գոնն ներկայումս մնում է դպրոցը:

Այս լուսարանութեաններից հետո, կարելի չէ համաձայնել  
Պինկեիչի հետ և մանկավարժութեան գիտութեանը սահմանել  
այսպէս.

«Մանկավարժութեանը մանկավարժական պրոցեսի էլու-  
թեան, պայմանների և սրենքների գիտութեանն և կամ շրտախա-  
րակութեան և կրթութեան տեսութեանը»:

## II. ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թեպետ XVIII դարի կեսերից-ժ.ժ. Ռուսոյի «Նմիլով» հիմք  
գրից գիտական մանկավարժութեան, սակայն, իրրի գիտական  
սխտեմ՝ մանկավարժութեանը նոր է ստեղծվում: Այս պատճա-  
ռով և փոմանք այն կարծիքն ունեն, թե մանկավարժութեանն  
ինքնուրույն գիտութեան չէ, փորովհետև կապված է և կախված  
ուրիշ գիտական դիսցիպլիններից ինչպէս բովանդակութեամբ,  
այնպէս և մեթոդներով: Վոմանք էլ մանկավարժութեանը համա-  
րում են գործնական դիսցիպլին, գաստիարակութեան և կրթու-  
թեան գործն՝ իրրի արվեստ, տեխնիկա, համենայն դեպս վոչ  
գիտութեան:

Նախ քննենք այն հարցը, թե մանկավարժութեանը փոր գի-  
տութեանների հետ և կապված և փորշափ:

Մանկավարժութեան համար հիմնական գիտութեան և ման-

կարանությունը, կարեւոր է նաև հոգեբանությունը: Մանկաբանությունն ուսումնասիրում է մանկական պատանեկական տարիքի յերեխաների մարմնական և հոգեկան յերկվույթներն ու ձևափոխություններն իրենց աճման-զարգացման սրբոցետեմ, ուրիշ խողջայ՝ մանկաբանությունն ուսումնասիրում է մանկական-սրտաննկական տարիքի բիոլոգիան և սոցիոլոգիան, ուրեմն և հոգեբանությունը:

Մանկավարժությունը զիմելով մանկաբանության, առնում և հաշտանում է վերջինիս մշակած նյութերը և զբանց վրա հիմնում յուր գործնական աշխատանքները: Նախադպրոցական և դպրոցական գործը զիտական հիմունքների վրա դնելու համար մանկաբանության ավյալների ոգտադործումն նախուստիելի յե:

Ընդհ. հոգեբանությունն ուսումնասիրում է հասակավոր մարդու հոգեկան յերեույթների ծագումը, ընթացքը և ուրեմն-բերը, իսկ սոցիալական հոգեբանությունը՝ կոլլեկտիվ հոգեկան արտահայտությունները: Մանկավարժությունը չի կարող անգիտանալ հոգեբանության փաստերը, վորովհետև մտավոր-սոցիալական դաստիարակությունը մանկավարժության ամենահիմնական բաժինն և և ուրեմն կապված ընդհանուր և սոցիալական հոգեբանության փաստերի հետ: Ակամ ամենափոքր մեթոդական խնդրի մշակումից և գործադրությունից մինչև դաստիարակության և կրթության ամենարարդ հարցերի լուծումը՝ մանկավարժությունը կարիք ունի հոգեբանության ճշգրիտ ավյալներին:

Ուսելով մանկաբանության և հոգեբանության կապի մասին, բնականաբար բնագծվում է մանկավարժության կապը բնյալստության հետ աշխարհ, վորքան վերջինս հիմնական նախադրյալն է հանդիսանում թե՛ մեկի և թե՛ մյուսի համար:

Մանկավարժությունը կապված է նաև բժշկականության հետ դպրոցական առողջապահության և հոգեպատարդիական հարցերով:

Մանկավարժի աշխատանքը կատարվում է ավյալ սեռական իրավակարգում, հասարակության համար: Քանի վոր դաստիարակչական և կրթական գործը միշտ յեղել է և այժմ էլ դասակարգային և, այսինքն իշխող դասակարգի քաղաքականության յենթակա, ուստի մանկավարժությունը սերտորեն կապվում է շոցիալ-տնտեսական գիտությունների հետ: Ընդհանուր և ավյալ ժողովրդի պատմություն— հասարակագիտություն, իրավագիտություն, անտեսագիտություն և այլն— ահա այդ գիտություններին միշտ պետք է զիմի մանկավարժ-թեորետիկը, յերբ նա կանգնած է կրթա-դաստիարակչական սրբոքեմի հետ կապված իդեոլոգիական խնդիրների առջև: Մեթոդոլոգիական հարցերում

մանկավարժությունը զիմում է փիլիսոփայական դիսցիպլիններին, յորհրդային մանկավարժությունը— հատկապես պատմական և զիտակտիկական մատերիալիզմին:

Պարզելով մանկավարժության կախումը մի շարք գիտություններից, կասկած ու հարց և ծագում—գիտություն և եւրեմն մանկավարժությունը: Բայց ինչ և գիտությունը: Այս հարցի պատասխանը բազմապան է և քմահաճ: Ըստ Պատյունի «ընդհանուր և անհրաժեշտ ճշմարտությունների սիսեմը կոչվում է գիտություն» կամ «վորեկ ամբողջացում, վոր կաղմված է փաստերից ու գիտողություններից, սրբոքեմներից ու հետախուզումներից, թեորիաներից ու հիպոթեզներից կոչվում է գիտություն»: Յերկրորդ բնորոշումից հետևում է, վոր մանկավարժությունն էլ գիտություն է: «Գիտությունը ճշգրտված գիտելիքների սիսեմն է», պնդում է Պինկելիչը: Այս սահմանումն էլ բնագրկում է մանկավարժությունն իրրե գիտություն, վորովհետև մանկավարժությունն էլ ճգտում և ճշգրիտ, առուղված գիտելիքների, հենվելով և քաղերիմենտալ-ոքեկտիվ մեթոդների վրա: Յեկ մանկավարժական յեղրակացությունների մի մասն անպայման գիտական նվաճումներ պիտի համարել:

Մանկավարժությունը զիտական դիսցիպլին չհամարոյնելն առարկում են, վոր դա մի կոմպլեքս և շատ հարակից ու հետախուզությունների և շունի յուր հետադասության հասուկ խնդիրներն ու մեթոդները: Բայց նույնպիսի առարկություններ կարելի յե ուղղել նաև բժշկականությանը, ագրոնոմիային, բնագիտությանը և այլն, սակայն, վոր վոր կտակած շունի սրանց գիտական բնույթի նկատմամբ, ուրեմն և կարող ենք մանկավարժությունն էլ նույն իրավունքով գիտություն համարել:

Յուրաքանչյուր մի գիտության գլխավոր հատկություններից մեկն էլ այն է, վոր ունի յուր սեփական բնագալառը: Մանկավարժության նյութը դաստիարակությունն է և կրթությունը, ուրիշ վոր մի գիտություն զբանով չի գրաղվում: Բժշկականության, իրավարանության, մանկավարժության մատերիալը մարդն է: մինչդեռ բժշկականությունը մարդուն նայում է միայն բժշկական տեսակետից, իրավարանությունը մեղադրման կամ արդարացման տեսակետից, մանկավարժությունը մարդուն նայում է կրթության և դաստիարակության տեսակետից, ուրեմն և գիտություններին միմյանցից բաժանողը վոր թե նյութն և միայն, այլ տեսակետը զեպի նյութը, ինչպես պնդում է գերմանացի հոգեբան Եոնստ Մոլմանը:

Նրանք, ովքեր մանկավարժությունը համարում են իրրե մի գործնական դիսցիպլին, շիթում են մանկավարժություն-գիտու-

թյունը մանկավարժության-ուրվեստի հետ: Ճշմարիտ է, մանկավարժական պրակտիկ մասը — գասալանդումը միտքը չափով սուր՝ յեկախ մտնեմ — անձնական շնորքի հետ է կապված, սակայն, ամեն մի շնորք, արվեստ պետք է հիմնվի տեսականի, դիտականի վրա, այսպես ամեն մի պրակտիկա կլինի կույր ինչպես ասել է գերմանացի մանկավարժ Հերրարտը:

Մանկավարժությունն իբրև գիտություն կարելի չէ ստորաբաժանել հետեվյալ ձյուղերին.

ա) Ընդհանուր մանկավարժություն կամ դաստիարակություն տեսությամբ, միտքը պարզվում է մանկավարժության ընդհանուր սկզբունքային խնդիրները վերլուծումով, որինակ՝ ի՞նչ է մանկավարժությունը, ժառանգականության և միջավայրի պրոբլեմը, անհատական և սոցիալական մանկավարժության էությունը, ազատ գաստիարակության տեսությունը և այլն:

բ) Աշխատանքի դպրոցի տեսություն և պրակտիկա. — Անունն արդեն ասում է, թե ինչ է այս առարկայի բովանդակությունը — առաջ հասակ պատկերացում խորհրդային ու բուրժուական աշխատանքի զարգացման էություն, սկզբունքային տարբերությունները, խորհրդային դպրոցի բովանդակություն, մեթոդները, կամայլևքսային դասավանդման ու կազմակերպչական խնդիրները:

գ) Ընդհանուր դասավանդություն, կամ հին տերմինոլոգիայով — ընդհանուր դիդակտիկա, վերաբերում է դասավանդման ընդհանուր նորմերին, կանոններին, մի խոսքով ուսուցման հարցերին: Ներկայումս այս կուրսը սովորապես կցվում է «Աշխատանքի դպրոցի տեսություն»:

դ) Մեթոդիկաներ կամ հին տերմինոլոգիայով՝ մասնավոր դիդակտիկա, միտքը պարզվում է դպրոցում դասավանդվող այս կամ այն առարկայի ուսուցման հետ կապված մեթոդական հարցերով: Ամեն մի մեթոդիկա պարունակում է տվյալ առարկայի ուսուցման բոլոր կանոնները, որենքները, հրահանգները:

Ենթահիվ բովանդակություն և բնութի տարբերություն, յուրաքանչյուր առարկա ունի յուր մեթոդիկան: Գոյություն ունեն մայրենի և ոտար լեզուների, մաթեմատիկայի, բնագիտության, աշխարհագրության, հասարակագիտության, նկարչության, յերթաժամության և մյուս բոլոր առարկաների մեթոդիկաներ:

յ) Ժող. յուսավորության սիստեմ. — Սա նոր դիպրոպիին է և հանդես է յեկել բացառապես յտորհրդ. մանկավարժության մեջ: Խորհրդային յուսավորության սիստեմը, միտքը յատ սեղմ կապվում է մեր յերկրի Ժողովրդական անտեսության սոցիալատական վերակառուցման հետ, միանգամայն տարբերվում է բուրժուական աշխարհի կրթական սիստեմից: Ժող. յուս. սիստեմը ծանոթացնում

է յուսավորության գործի հիմնական սկզբունքներին, ցանցին և յուրաքանչյուր յուսահիմնարկի նպատակին, բովանդակության և կառուցվածքին:

զ) Մանկավարժության պատմություն. — Ընդգրկում է մանկավարժական իդեաների զարգացումը հին դարերից մինչև մեր օրերը:

Խորհրդային մանկավարժության մեջ կա նաև «Կամայլևքսային դասավանդման մեթոդիկա» առարկան, սակայն, մեր կարծիքով դա բնագործակարար և վերամոլել ինքնուրույն կուրսի և կազմում է «Աշխատանքի դպրոցի տեսություն և պրակտիկայի» կուրսի սրգանական մասը:

### III ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՂՆԵՐԸ

Այս հատվածում յտուքը վերաբերում է միջ դասավանդման, այլ մանկավարժական պրոցեսների ուսումնասիրության մեթոդներին: Իբրև սոցիոլոգիական գիտություն, մանկավարժությունն սղտվում է սոցիոլոգիական մեթոդից (պատմ. մասոքրայինից), յոյ իբրև բիոլոգիական դիսցիպլին՝ բիոլոգիական այսինքն՝ էքսպերիմենտալ մեթոդից: Բոլոր մեթոդներին ուղեցույց է հանդիսանալու դեյտեկտիկաները:

Մանկավարժությունն իր նյութերի մեջ սկման ու յեղրակացությունները համար սղտվում է սրամարանություն մի բանը մեթոդներից, առաջին հերթին՝ դեյուկցիայից և ինդուկցիայից: Անցյալում դերիշտողը յեղել է առաջինն, յակ ներկայումս՝ յերկրորդը: Զերկուլյեթները ուսումնասիրության ինդուկտիվ մեթոդը հիմնված է գիտական փորձի — էքսպերիմենտի և կազմակերպված գիտողությունները վրա, սերմն և ալեյի վստահելի յե: Մանկավարժական պրոցեսի վերաբերվող այս կամ այն դեյուկտիվ ուսումնասիրները սովորապես ուսուցվում են փորձի միջոցով և յուս այնմ դործողվում կամ մերժվում:

Բացի այս ընդհանուր մեթոդներից կան մի յարք մասնակի մեթոդներ, մորոնցով ուսումնասիրում են յերկխաների ու հասակավորների հոգեկան կյանքի որենքներն այնքան, մորքան գրանք մանկավարժական արժեք են ներկայացնում: Այլ մեթոդներն են՝ դիտողությունը, էքսպերիմենտը, անկետան, տեսուրը, յերկխաների ստեղծագործական արտադրանքների, ապա գեղարվեստական գրականության և ինքնակենսագրությունների ուսումնասիրությունը:

1. Դիտողություն. — Իհարկե, այսուկ յտուքը միջ թե ստորյա պատահական գիտողությունների մասին է, մորոնց արդյունք

ները փայլելու յեն, յեզրակացութեանները սուր յեկտիվ, ուրեմն կասկածելի, այլ նպատակադրված, ծրագրված զխառնութեանների, փորձք կարող են լինել և՛ նախադպրոցական և՛ դպրոցական տարիքի յերեխաների նկատմամբ— մանկադարակում, դպրոցում, բնասնիքում, դրսում: Ծրագրված զխառնութեանը վերաբերում և յերեխաների կյանքի կենկրեստ արտահայտութեաններին կամ փաստերին, և աշուհակտե տեղի ունենում դրանց մշակումը, նկարագրութեանը և յեզրակացութեանները: Գիտություններ մի կարևոր միջոց և մանկարանական և մանկավարժական բազմաթիվ գործնական խնդիրների ուսումնասիրութեան համար: Գիտություն միջոցով տվյալ յերևույթն ուսումնասիրում են յուր ստաջանցման բնական պայմաններում, ուստի հաճախ կարող և պատահել, փոր մանկավարժին հետաքրքրող փորեկ յերևույթ ուզած ժամանակ հանդես չգա, այսպիսով մնա զխառնութեանն անմատչելի և սուրեմն մանկավարժական պրոցեսի ուսումնասիրութեանից դուրս, այս պատճառով ել զիմում են Երազերիմենտայ մեթոդին:

2. Երազերիմենտայ մեթոդը— հիմնված և Երազերիմենտի կամ փորձի վրա: Ինչպես մի շարք այլ զխառնութեանների մեջ, այնպես և մանկարանութեան, հոգեբանութեան և մանկավարժութեան ընդհանրությունում վաղուց ի վեր կիրառվում և Երազերիմենտը և սույն զխառնակնային արժեքավոր արդյունքներ: Երազերիմենտայ մեթոդը զխոտզականից տարբերվում և նրանով, փոր ա) տվյալ յերևույթի ուսումնասիրութեան համար չի սպասում դրս բնական ստաջանցմանը, փոր կարող և շատ ուշանող, այլ արհեստական պայմաններ և ստեղծում՝ այլ յերևույթն ուղած ժամանակը հանդես բերելու, բ) Երազերիմենտատորը յեզրակացութեաններ հանելու համար չի բավարարվում միայն մի կամ յերկու, այլ բազմաթիվ փորձերով, գ) փորձերն ամեն անգամ նույնութեամբ չեն կրկնվում, նայած պահանջին, փորձի լիակամ են պայմանները, համարասանաբար ուսումնասիրվող փաստն ստաջանցող պատճառի և դրա հետևանքի կապակցութեանը: Մանկավարժութեան տարբեր մտակրում Երազերիմենտայ մեթոդի գործադրութեան նպատկությունները պարզ յե ամեն քայլափոխի: Հավարժված փաստերը վերածվում են սխոտեմի, սպա հանվում անհրաժեշտ յեզրակացութեաններ և վերջում կատարվում ընդհանրացումներ:

Երազերիմենտը բնական և կազմում, յերբ տվյալ անհատին կամ անհատներին ուսումնասիրում են ծրագրած և նախամտածված պայմաններում, բայց այնպես, փոր այլ արհեստականութեանը, ինչպես և Երազերիմենտատորը կամ զխառնութեան կատարողը մնա աննկատ, փորձի սրբեկար զգա իրեն բնական շրջա-

պատում, այլպես ապարդյուն կանցնի ամեն մի Երազերիմենտ: Բացի բնական Երազերիմենտից մեծ չափով կիրառվում և նաև գործիքներով Երազերիմենտը:

Միտեմատիկ զխառնութեանը և բնական Երազերիմենտն իրենց բնույթով նման են և լրացնում են միմյանց: Երազերիմենտայ մեթոդը մանկավարժութեան մեջ սկսեց կիրառվել X<sup>1</sup>X-րդ դարի ՏՊ-ական թվականներից, և աշուհակտե դարձավ մանկավարժական ուսումնասիրութեանների հիմնական մեթոդը: Գերմանացի հոգեբաններ Մոյսանը, Լայր և ուրիշներն ունեն «Երազերիմենտայ մանկավարժութեան», «Երազերիմենտայ զիլլակաիկ» անունը կրող յերկեր, հրատարակում են հանդեսներ, նվիրված բացառապես Երազերիմենտայ մանկավարժութեան խնդիրներին:

3. Անկեսային մեթոդն ամերիկյան ծագում ունի: Դրա Երազերիմենտն այն և, փոր տվյալ մանկավարժական պրոցեսի կամ յերեխաների կյանքի փորեկ մոմենտն ուսումնասիրելու համար մի շարք մարդկանց ստաջակրվում են նույն հարցերը, փորանց պետք և պատասխաններ իրենք աշակերտները, յեթև արդեն չափահաս են, հակառակ զեղբուն՝ ծնողները, խնամակալները, ուսուցիչները և այլն: Ստացված անկեսային հարցերի պատասխանները նկատն առնելով ու դասավորելով, գալիս են փորձ յեզրակացութեան: Ենկեսային մեթոդով կատարում են ինչպես անհատական, այնպես և մատուցական մանկարանական, հոգեբանական մանկավարժական ուսումնասիրութեաններ: Բայց քանի փոր անկեսային հարցերի պատասխանները շատ հաճախ լինում են սուր յեկտիվ, ինչպես զխոտզական մեթոդը գործադրելիս, ուստի Երազերիմենտայ մեթոդի արդյունքներն ավելի վստահելի յեն, քան անկեսային, վարժական սրբեկտիվ են:

4. Տեստերի մեթոդը նույնպես Ամերիկայում և ծագել, ինչպես անկեսայինը: Դա ձգտում և սրբեկտիվ յեզանակով պարզել, ստույգայ տարիքի յերեխաների այս կամ այն մանկավարժական աշխատանքի միջին նորման (կամ ստանդարտը) և յեզուսներն այլ նորմայից, բ) տվյալ անհատի կամ անհատների կարողությունները, ընդունակությունները գանազան մասնագիտությունների համար: Բացի դրանից, տեստերի մեթոդը հաղխանում և դպրոցական աշխատանքների հաշվուման մի միջոց, ուստի և այս վերջին տեսակի տեստերը կոչվում են «զպրոցական տեստեր»:

Տեստերը փոչ այլ ինչ են, քան հատուկ խնդիրներ, փոր ստաջակրվում են քննութեան յենթակա անձերին: Արիմակ, թվարանական տեստությունների գարգացման նորմայ տարիճանը— ստանդարտը և յեզուսները փորձերու համար, աշակերտներին բաժանում են թերթեր, ստեղք բազմապատկան փորժութեաններով:

Վորոնց պատասխանները պետք է գրեն հենց իրենք աշակերտները: Ճիշտ ու սխալ պատասխաններից կերևա նրանց թվարանական անհույսությունների ապրիմանը: Տեստերի մեթոդն անավել է անկե-տայինից նրանով, վոր առաջին արդյունքներն ավելի որդիկավի են, ուրեմն և զխտական: Ներկայումս տեստերի մեթոդը լայն կիրառում ունի բոլոր կուլտուրական յերկրներում— և՛ մանկաբանություն և՛ մանկավարժություն մեջ, հետզհետե գործածություն և գտնում նաև խորհրդային մանկավարժության մեջ:

Տեստերի և եքսպերիմենտալ մեթոդի միջև կա վորոշ ատրնշու-թյուն, առաջինը հանդիսանում է անցողիկ աստիճան յերկրորդի համար: Սակայն, տեստերն եքսպերիմենտից տարբերվում են նը-րանով, վոր քննելով ու գննելով փաստերը, վոր մի փոփոխություն չեն մտցնում այդ փաստերն առաջացնող պայմաններում, մինչդեռ եքսպերիմենտատորը իր փորձերով վոր միայն յեղածն է ցանկանում ուսումնասիրել, այլև նոր մոմենտներ, պրոբլեմներ, փոխհարա-բերություններ մտցնում: որինակ՝ փորձում է դասավանդման մի նոր յեղանակ և հետազոտում արդյունքները: Կան հատուկ դպրոց-ներ, նաև Խորհրդային Միության մեջ, վորոնք եքսպերիմենտալ են:

Այդ ցուցադրական դպրոցներում կատարվում են բաղմամբի վորձեր՝ վորոշելու զանազան նոր մեթոդների կամ մեթոդական յեղանակների արժեքը:

Տեստերի մեթոդն ունի և թերի կողմեր: Դրանով կարելի յե պարզել մանկավարժական անջատ մոմենտներ, բայց վոր ամբող-ջական պրոցեսներ:

5. Յերեխաների ստեղծագործական արտադրանքների ուսում-նասիրությունը տալիս է հետաքրքրական արդյունքներ, մասնավորապես նախադպրոցական դաստիարակության մեջ: Յերեխաների հոգեկան կյանքը և զարգացումն որ յեկտիվորեն արտահայտվում է նրանց նկարներում, կառուցվածքներում, խաղերում, յերգերում, պատմվածքներում, նամակներում և այլն: Որինակ, ինքնակամ կերպով նկարած մարդը շատ կոնկրետ ձևով տալիս է նկարողի զարգացման, դատողության, գիտողության չափը և միջավայրի ազդեցությունը:

6. Ինֆեակիևագրությունները և գեղարվեստական գրակա-նություն մեջ պատկերացված յերեխաների կամ չափահասների կյանքի նկարագիրը և հոգեկան ապրումների տիպիկ արտահայ-տությունը վորոշ չափով կոմանդակի ըմբռնելու—ճանաչելու ման-կավարժության որ յեկտին: Այս մեթոդն ունի սուր յեկտիվ յնություն, վորքան ինքնակենսագրության կամ գրական յերկի հեղինակը հա-ճախ գեկավարում է յուր անձնական արամագրություններով և ուրեմն գրանով հետանում իրականությունից:

Գիտական մանկավարժության մեթոդների ընդհանուր գնահա-տականը — վերոհիշյալ մեթոդներից և վոր մեկն էլ չի կարող լրիվ և կատարյալ համարվել: Մարդու մտավոր աշխարհը բազմակող-մանի կերպով լմբռնելու—ուսումնասիրելու համար անհրաժեշտ է բոլոր մեթոդների գործադրությունը:

Այս մասնակի մեթոդների արդյունքներն արժեքախորհուրու հա-մար պետք է դիմել մարքսիստական անալիզի և սինթեզի մեթոդին կամ դիալեկտիկական մատերիալիզմին, ինչպես արդեն հիշվեց վերևում: Բերենք այստեղ Պինկեիչի մի համալսածը շոշափովոջ հար-ցի մասին և դրանով ավարտենք այս առաջադրությունը: «Գիտա-կան—մանկավարժական հետազոտության ժամանակ անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ մատերիալիստական դիալեկտիկայի պահանջ-ները, վորոնք են—անընդհատ փոփոխականություն, յերեւոյթների ընդհանուր կապի սկզբունքները, յերեւոյթների զարգացումը հա-կատության միջոցով և վերջապես այս ու այն պրոցեսի թոխչբամե գորգացումը: Ուստի մանկավարժական ամբողջ պրոցեսը չի գիտ-վում իբրև ինչ վոր սառած—կանգնած բան, այլ իբրև մի պրոցես, այսինքն՝ շարժվող և փոփոխվող բան: Այդ պրոցեսն ուսումնասի-րելիս հաշվի յեն անվում բոլոր հիմնական յերեւոյթներն իրենց կապակցությամբ, իրենց զարգացման մեջ յերեւման յեկող հակա-սությունությամբ, իբրև մղիչ հետագա զարգացման. պարզվում է, թե ինչպես, որինակ, քանակի կուսակումը կարող է տալ նոր փարակ և այլն»:

### ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Դաստիարակության զաղափարն ի՞նչպես են սահմանում Պաուլսենը, Բյոնսկին և Պինկեիչը:
2. Վո՞րն է Շուլցիների և նրա համախոհների ստորկություն-ները Պինկեիչի կրթա-դաստիարակչական ըմբռնման դեմ:
3. Ինչո՞ւ չի կարելի ըստ Պինկեիչի մանկավարժությունը սահմանել իբրև մի գիտություն, վոր ուսումնասիրում է ամեն տե-սակ ներդրածությունները մարդու վրա:
4. Ի՞նչ է մանկավարժական պրոցեսն ըստ Կրուպենինայի և Կարաչիկովի:
5. Պարզեցե՛ք ձեզ, թե մանկավարժական պրոցեսի էյությունը վորոշելիս վ՞որ կետում համաձայն կամ անհամաձայն էք Պինկեիչի և Շուլցիների — Կրուպենինայի հետ:
6. Վո՞րպիսի գիտություն է մանկավարժությունը— հասարա-կագիտական թե՞ բիոլոգիական:
7. Ի՞նչ հիմնավորումներ կան մանկավարժության գիտություն կամ արվեստ լինելու մասին:



8. Ի՞նչ կազմում են մանկավարժությունը մանկադասարանությունը, հոգևորականությունը, բժշկականությունը, բնագիտությունը, հասարակական և փիլիսոփայական գիտությունները հետ:

9. Ինչո՞ւ մանկավարժությունը գիտություն է. ի՞նչ էն յուրաքանչյուր գիտություն գլխավոր նշանները:

10. Վ՞՛րտե՞ք են մանկավարժական գիտությունները:

11. Վ՞՛րտե՞ք են մանկավարժություն — գիտություն մեթոդները:

12. Վ՞՛րտե՞ք են դիտություն և երազերիմենտալ մեթոդների հիմնական տարբերությունները:

13. Նկարագրե՛ցե՛ք տեսների մեթոդի էությունը և համեմատե՛ցե՛ք այդ և երազերիմենտալ մեթոդները:

14. Մանակի մեթոդներից ի՞նչ է ձեզ ամենից նպատակահարմարը թվում:

15. Բնութագրե՛ցե՛ք դիալեկտիկ մեթոդի նշանակությունը մանկավարժության համար:

**Աղբյուրներ**

1. Пинкевич—Педагогика I т. (изд. 6) ԿԳ 5—20
2. „ — Основы сов. пед. 1929 г. Задача I. II.
3. Проблемы научной пед. I сб. 5—31.
4. Спорные вопросы марксист. пед. 1929 г.
5. Блонский—Педагогика, I т.



**ՀԱՅԳՈՒԹՅԱՅ**

Պատվեր. 274. Գրատեպլիֆար 5882 (բ) Տիրած 500

635

« Ազգային գրադարան



NL0051440

178871

2013

